ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

<<___>> _____ 2014թ. N ____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 149-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի <<Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագիրը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին>> N 149-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի՝

1) 15-րդ և 16-րդ կետերում <<1978,7>> թիվը փոխարինել <<1906,3>> թվով, իսկ <<189,96 >> թիվը փոխարինել <<169,96>> թվով:

2) 19-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<19. Հայաստանի Հանրապետության մարզերին գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի սերմացուի նախատեսված քանակությունները՝

Աղյուսակ 1

h/h	Մարզի անվանումը	Հատկացվող սերմացուի քանակը (տոննա)			
		գարնանացան գարու սերմացու	եգիպտացորենի սերմացու	առվույտի սերմացու	կորնգանի սերմացու
1	Արագածոտն	350	0	32	66.5
2	Արարատ	33.85	3.5	16.08	0
3	Արմավիր	23.0	0.6	6.916	0
4	Գեղարքունիք	515.95	0	33.724	43.76
5	Լոռի	100	4.16	11.5	13.5
6	Կոտայք	77.65	0	2	0.5
7	Շիրակ	632.7	13.25	57.03	45.7
8	Սյունիք	200.0	0.9	6	0
9	Վայոց Ձոր	65.5	0.03	1.1	0
10	Տավուշ	50.0	1	2	0
11	<<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ	7.65	0	0	0
Ընդամենը		2056.3	23.44	168.35	169.96

>>

3) 26-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

<<26. Հայաստանի Հանրապետության մարզերին նախատեսված, սակայն հող-օգտագործողների կողմից վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով չիրացված գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի սերմացուների հետագա պահպանության և հողօգտագործողներին սույն ծրագրի դրույթներին համապատասխան իրացման ու ըստ համայնքների հատկացման աշխատանքների պատասխանատվությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին:

1) Սույն կետում նշված սերմացուների իրացումն մարզպատարանների կողմից իրականացվում է մինչև 2015 թվականի մայիսի 15-ը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2014 թվականին հունիսի 19-ին, 30-ին, հուլիսի 7-ին, 26-ին, կարկտահարությունից տուժած համայնքների գարնանացան գարու սերմացու ստացած հողօգտագործողներից:

2) Հայաստանի Հանրապետության մարզերին նախատեսված, սակայն հող-օգտագործողների կողմից վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով չիրացված գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի սերմացուները՝ համաձայն աղյուսակ 2-ի, հատկացվում են Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին համապատասխան մարզպետարանի և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության <<Սերմերի գործակալություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Աղյուսակ 2

Վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով չիրացված գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի սերմացուների

h/h	Մարզի անվանումը	Չիրացված սերմացուի քանակը (տոննա)			
		գարնանացան գարու սերմացու	եգիպտացորենի սերմացու	առվույտի սերմացու	կորնգանի սերմացու
1	Արագածոտն	305.3	0	25.22	6.455
2	Արարատ	3.85	3.0	12.18	0
3	Արմավիր	0	0.35	0	0
4	Գեղարքունիք	225.25	0	30.794	34.082
5	Լոռի	54.7	1.66	6.324	3.973
6	Կոտայք	8.773	0	0.696	0
7	Շիրակ	569.822	12.255	49.807	0
8	Սյունիք	0	0.7	0	0
9	Վայոց Ձոր	37	0.03	0.63	0
10	Տավուշ	34.42	0.825	1.232	0

Ընդամենը	1239.115	18.82	126.883	44.51

>>

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության մարզերում չիրացված գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի սերմացուները Հայաստանի Հանրապետության մարզեր տեղափոխելու, բարձման և բեռնաթափման աշխատանքները կազմակերպելու նպատակով օգտագործել մինչև 13000000.0 դրամ՝ ծրագրի իրականացման արդյունքում տնտեսված 36297800.0 դրամից:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության մարզերում չիրացված գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի սերմացուները Հայաստանի Հանրապետության մարզեր տեղափոխելու, բարձման և բեռնաթափման աշխատանքները ավարտելուց հետո տնտեսված գումարը մինչև 2014թ. դեկտեմբերի 20-ը ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ **<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 149-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**	
1.	**Անհրաժեշտությունը**
	Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության մարզպետարաններից ներկայացված պահանջարկի, հանրապետություն նախատեսվում էր 2014 թվականի գարնանն արտերկրից ներմուծել 1978.7 տոննա գարնանացան գարու առաջին վերարտադրության, 168.35 տոննա կապույտ առվույտի, 189.96 տոննա կորնգանի, 23.44 տոննա եգիպտացորենի սերմացու, իսկ տեղական սերմարտադրողներից գնել 150 տոննա էլիտային վերարտադրության գարնանացան գարու սերմացու: Ծրագրի իրականացման ընթացքում պարզ է դարձել, որ ՀՀ մարզպատարաններից ներկայացված սերմացուների պահանջարկը իրատեսական չէ և ներկրված սերմացուները չեն իրացվում, որի արդյունքում հանրապետություն են ներկրվել 1906.3 տոննա գարնանացան գարու առաջին վերարտադրության, 168.35 տոննա կապույտ առվույտի, 169.96 տոննա կորնգանի և 23.44 տոննա եգիպտացորենի սերմացու, իսկ տեղական սերմարտադրողներից գնվել է 150 տոննա էլիտային վերարտադրության գարնանացան գարու սերմացու: ՌԴ-ից պակաս է ներկրվել 72.4 տոննա գարնանացան գարու և 20 տոննա կորնգանի սերմացու: Չնայած պակաս կատարված ներկրումներին, ծրագրի իրականացման ընթացքում լուրջ դժվարություններ առաջացան հանրապետություն ներկրված սերմացուների իրացման հարցում: 2014թ. հուլիսի 31-ի դրությամբ ՀՀ մարզերում իրացվել է 817,185, տոննա գարու, 4,62 տոննա եգիպտացորենի, 41,467 տոննա առվույտի և 125,45 տոննա կորնգանի սերմացու: Համաձայն ծրագրի՝ պահանջարկի բացակայության հետևանքով չիրացված 1239,115, տոննա գարու, 18,82 տոննա եգիպտացորենի, 126,883 տոննա առվույտի և 44,51 տոննա կորնգանի սերմացուի հետագա պահպանության և դրանց իրացման աշխատանքների պատասխանատվությունը վերապահվում է <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ին՝ 2015 թվականի գարնանը ծրագրի

	դրույթներին համապատասխան հողօգտագործողներին հատկացնելու նպատակով: Ներկայումս <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի կողմից 1003.3 տոննա գարու, 15.28 տոննա եգիպտացորենի, 67.7 տոննա առվույտի և 23.8 տոննա կորնգանի սերմացուներ պահեստավորվել են <<Բերրիություն>> ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում>> ՍՊԸ-ի պահեստում, իսկ մնացած քանակները գտնվում են ՀՀ մարզերում: Նշված ծավալներով սերմացուների առանց կորուստների պահպանությունը պահեստում հնարավոր չէ՝ պահեստի անհարմարության պատճառով: Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտություն է առաջացել ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝ նվազեցնելով ներկրվող սերմացուների ծավալները, իսկ չիրացված սերմացուի հետագա պահպանության և դրանց 2015թ. գարնանը իրացման ու ըստ համայնքների հատկացման աշխատանքների պատասխանատվությունը վերապահել համապատասխան մարզպետարաններին: Հայաստանի Հանրապետության մարզերում չիրացված գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի սերմացուները Հայաստանի Հանրապետության մարզեր տեղափոխելու, բարձման և բեռնաթափման աշխատանքները կազմակերպելու նպատակով «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը թույլատրվում է օգտագործել 15000000.0 դրամ՝ նպատակային հաշվեհամարից:
2.	**Ընթացիկ իրավիճակը և խնդիրներ**
	Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի իրականացման ընթացքում պարզ է դարձել, որ ՀՀ մարզպետարաններից ներկայացված սերմացուների պահանջարկը իրատեսական չէ և ներկրված սերմացուները չեն իրացվում, որի արդյունքում հանրապետություն են ներկրվել 1906.3 տոննա գարնանացան գարու առաջին վերարտադրության, 168.35 տոննա կապույտ առվույտի, 169.96 տոննա կորնգանի և 23.44 տոննա եգիպտացորենի սերմացու, իսկ տեղական սերմարտադրողներից գնվել է 150 տոննա էլիտային վերարտադրության գարնանացան գարու սերմացու: ՌԴ-ից պակաս է ներկրվել 72.4 տոննա գարնանացան գարու և 20 տոննա կորնգանի սերմացու: Չնայած պակաս կատարված ներկրումներին, ծրագրի իրականացման ընթացքում լուրջ դժվարություններ առաջացան հանրապետություն ներկրված

	սերմացուների իրացման հարցում: 2014թ. հուլիսի 31-ի դրությամբ ՀՀ մարզերում իրացվել է 817,185 տոննա գարու, 4,62 տոննա եգիպտացորենի, 41,467 տոննա առվույտի և 125,45 տոննա կորնգանի սերմացու:
3.	**Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**
	Հանրապետությունում իրականացվում է <<Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը>>: 2011 թվականին իրականացվել են <<Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի գարնանացան գարու սերմարտադրության զարգացման>>, <<Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի գարնանացան գարու արտադրության զարգացման>>, <<Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի եգիպտացորենի արտադրության զարգացման>> ծրագրերը, 2013 թվականին՝ Հայաստանի Հանրապետության 2013 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագիրը:
4.	**Կարգավորման նպատակը և բնույթը**
	Ծրագրի շրջանակներում չիրացված 1239,115 տոննա գարու, 18,82 տոննա եգիպտացորենի, 126,883 տոննա առվույտի և 44,51 տոննա կորնգանի սերմացուի առանց կորուստների պահպանության կազմակերպում՝ 2015 թվականի գարնանը հողօգտագործողներին հատկացնելու նպատակով:
5.	**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**
	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:
6.	**Ակնկալվող արդյունքը**
	Ծրագրի շրջանակներում չիրացված 1239,115 տոննա գարու, 18,82 տոննա եգիպտացորենի, 126,883 տոննա առվույտի և 44,51 տոննա կորնգանի սերմացուի առանց կորուստների պահպանության կազմակերպում, որոնք 2015 թվականի գարնանը՝ բարձր վերարտադրություն ապահովող սերմացուներով բավարարվածության մակարդակը բարձրացնելու նպատակով, սուբսիդավորված գներով, կհատկացվեն գյուղացիական տնտեսություններին:
7.	**Այլ տեղեկություններ**
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ	

ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ	
1.	**Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը**
	Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:
2.	**Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը**
	Նախագծին առնչվող միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններ չկան:
3.	**Այլ տեղեկություններ**

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	
1.	**Հասարակությանը նախագծի մասին իրազեկումը**
	Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և համայնքների կողմից հողօգտագործողների շրջանում իրականացվել են հարցումներ՝ սերմացուների պահանջարկի վերաբերյալ:
2.	**Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին**
	Նախագծմանը և/կամ քննարկումներին հասարակությունը մասնակցություն չի ունեցել:
3.	**Այլ տեղեկություններ**